Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

WorldPublicOpinion.org

The Chicago Council on Global Affairs

Աշխարհի հասարակությունները կողմնակից են գլոբալացմանը եւ առեւտրին, սակայն ցանկանում են պահպանել շրջակա միջավայրը եւ աշխատատեղերը

Աշխարհի ժողովուրդները գտնում են, որ տնտեսական գլոբալացումը եւ միջազգային առեւտուրը շահավետ են ազգային տնտեսություններին, առեւտրային ընկերություններին եւ սպառողներին: Բայց շատերն այն կարծիքին են, որ առեւտուրը վնաս է հասցնում շրջակա միջավայրին եւ սպառնում են աշխատատեղերին, ու այս պատճառով էլ շատերը ցանկանում են այս հետեւանքները մեղմացնել միջավայրի եւ աշխատանքային չափանիշների կիրառման միջոցով:

Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ եւ Համաշխարհային հասարակական կարծիք կազմակերպությունները, աշխարհի՝ հարցումներ անցկացնող կազմակերպությունների հետ համագործակցաբար, հետազոտությունն անց են կացրել աշխարհի բնակչության 56 տոկոս ներկայացնող երկրներում՝ Չինաստանում, Հնդկաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ինդոնեզիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Թաիլանդում, Ուկրաինայում, Լեհաստանում, Իրանում, Մեքսիկայում, Հարավային Կորեայում, Ֆիլիպիններում, Ավստրալիայում, Արգենտինայում, Պերուում, Իսրայելում եւ Հայաստանում, ինչպես նաեւ Պաղեստինյան տարածքներում:

Համամոլորակային հարցախույզի արդյունքների վրա հիմնված զեկույցների թվում սա վեցերորդն է, որը վերլուծում է միջազգային հանրության տեսակետը կարեւորագույն խնդիրների շուրջ: Ոչ բոլոր հարցերն են տրվել բոլոր երկրներում:

Գլոբալացմանը մեծապես աջակցում են ողջ աշխարհում: 17 երկրներում, ինչպես նաեւ պաղեստինյան տարածքներում հարցվել էր, թե իրենց երկրի համար «գլոբալացումը եւ հատկապես մեր տնտեսական կապերի զարգացումն այլ երկրների հետ մեծամասամբ լա՞վ է, թե՞ վատ»: Յուրաքանչյուր պարագայում գերակայել են դրական պատասխանները:

Աջակցության ամենաբարձր մակարդակը գրանցվել է արտահանման կողմնորոշում ունեցող տնտեսություններում՝ Չինաստանում (87%), Հարավային Կորեայում (86%) եւ Իսրայելում (82%): Չնայած դրական պատասխանները մեծապես գերակշռում են բացասական պատասխաններին, այնուամենայնիվ, այդպիսի պատասխանները 50%-ից ցածր են միայն 3 երկրներում: Գլոբալացման հանդեպ ամենաբարձր կասկածամտությունը գրանցվում է Մեքսիկայում (41% լավ, 22% վատ), Ռուսաստանում (41% լավ,

Համաշխարհայնացման մասին տեսակետները

Ըստ Ձեզ՝ համաշխարհայնացումը եւ հատկապես մեծացող տնտեսական կապերն աշխարհի այլ երկրների հետ հիմնականում լա՞վ են, թե՞ վատ [հարցվող երկրի] համար:



24% վատ), եւ Ֆիլիպիններում (49% լավ, 32% վատ): ԱՄՆ-ում 60%-ն այն կարծիքին է, որ գլոբալացումը մեծամասամբ լավ է, իսկ 35%-ը հակառակ կարծիքին է:

Ազգային տնտեսությունների վրա առեւտրի ունեցած դրական ազդեցության վերաբերյալ համակարծության տոկոսն ավելի բարձր է: 14 երկրներում հարցվել է՝ առեւտուրն իրենց տնտեսության համար լա՞վ է, թե՞ վատ: Բոլոր այս երկրներում մեծամասնությունները կարծում են, որ այն լավ է: Այս հարցի վերաբերյալ հավանության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Չինաստանում (88%), Իսրայելում (88%), Հարավային Կորեայում (79%) եւ Թաիլանդում (79%), իսկ ամենաշատ բացասական կարծիքները, որոնք, իմիջիայլոց, տածում էին փոքրամասնությունները, բացահատվել են ԱՄՆ-ում (42%), Ֆրանսիայում (34%), Մեքսիկայում (27%) եւ Հնդկաստանում (27%):

Հարցմանը մասնակցած բոլոր երկրներում մեծամասնությունը կարծում է, որ առեւտուրը լավ է իրենց երկրների առեւտրային ընկերությունների համար: Իսրայելցիները (86%), չինացիները (78%) եւ հարավային կորեացիները կրկին գլխավորում են այս ցուցակը: Ամենաշատ բացասական պատասխանները գրանցվել են ԱՄՆ-ում (45%), Ֆրանսիայում (43%) եւ Ռուսաստանում (34%):



Մեծամասնությունը նաեւ այն կարծիքին է, որ առեւտուրը օգտակար է սպառողների համար եւս: Գրեթե բոլոր երկրներում մեծամասնությունները (56-77%) դրական են վերաբերվում այս հարցին, սակայն միայն Արգենտինայում է, որ 46%-ը կարծում է, որ առեւտուրը լավ է սպառողների համար, իսկ 31%-ը գտնում է՝ վատ է: Չնայած ֆրանսիացիները բացասական պատասխան տվածների ամենաբարձր տոկոսն են կազմել (38%), այնուամենայնիվ, նրանց մեծամասնությունը (61%) նույնպես դրական է մոտենում այս հարցին: Ամերիկացիների գերակշիռ մեծամասնությունը՝ 70%-ը, եւս կարծում է, որ առեւտուրը լավ է սպառողների համար:

«Ձեր կենսամակարդակի» համար առեւտրի լավ կամ վատ լինելու վերաբերյալ հարցը նույն արդյունքներին է հանգեցրել: Բացի 3 երկրներից, մնացած բոլոր մյուս երկրներում մեծամասնությունը այս հարցին դրական պատասխան է տվել: Կրկին անգամ ամենախանդավառները իսրայելցիներն (74%) ու չինացիներն են (73%): Ամերիկացիները (64%) նույնպես դրական են վերաբերում այս հարցին: Միակ 3 բացառություններն են՝ Արգենտինան (42% լավ, 30% վատ), Ռուսաստանը (45% լավ, 19% վատ) եւ Ֆրանսիան (50% լավ, 44% վատ):

Առեւտուր եւ շրջակա միջավայր

Հարցման մասնակիցները մտահոգություն են հայտնում միջավայրի վրա առեւտրի ունեցած ազդեցության վերաբերյալ: Այն կարծիքը, որ առեւտուրը վատ է միջավայրի համար, գերակա է 4 երկրներում՝ Ֆրանսիայում (66% վատ, 29% լավ), ԱՄՆ-ում (49% վատ, 45% լավ), Արգենտինայում (46% վատ, 27% լավ) եւ Ռուսաստանում (44% վատ, 25% լավ): Այս հարցի շուրջ կարծիքները կիսվում են Հայաստանում (36% վատ, 37% լավ), Մեքսիկայում (41% վատ, 41% լավ) եւ Հարավային Կորեայում (49% վատ, 47% լավ):



Հարցմանը մասնակցած եւ ոչ մի երկրում որեւէ մեծամասնություն չի գտնում, որ առեւտուրը նպաստում է շրջակա միջավայրին: Միջավայրի վրա առեւտրի ազդեցության նկատմամբ ամենալավատեսներն են չինացիները (57%), իսրայելցիները (56%) եւ պաղեստինցիները (53%):

Կան որոշ պատճառներ, որոնց համար մարդիկ կարող են մտածել՝ առեւտուրը շրջակա միջավայրին վնաս է հասցնում: Ոմանք կարող են մտածել, որ այն խթանում է զարգացումն ու սպառումը՝ այդպիսով ստեղծելով ավելի շատ գործարաններ եւ մեքենաներ, եւ հետեւաբար ավելի շատ աղտոտվածություն: Ոմանք էլ կարող են ենթադրել, որ տեղական շուկաները արտասահմանյան արտադրանքների առջեւ բացելով՝ առեւտուրն առեւտրային ընկերություններին ավելի թույլ օրենսդրություն ունեցող երկրներ տեղափոխվելու միջոցով միջավայրի պահպանման վերաբերյալ օրենքները շրջանցելու հնարավորություն է ընձեռում:
Միջավայրի վրա առեւտրի հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղիներից մեկը միջավայրի պահպանման նվազագույն չափանիշները, որպես բաղկացուցիչ մաս, առեւտրային պայմանագրերում ներառելու պահանջն է: Քննադատները, սակայն, ասում են, որ միջավայրի պահպանման նվազագույն չափանիշներն առեւտրային պայմանագրերում ներառելը կվնասի զարգացող աշխարհին ծախսերի բարձրացմամբ եւ ներդրումների կրճատմամբ:

Սակայն ե՛ւ զարգացող, ե՛ւ զարգացած երկրների հանրությունները մեծ աջակցություն են ցուցաբերում այդպիսի չափանիշներին: 12 երկրներից 11-ում հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (60-90%) ասում է, որ առեւտրային պայմանագրերը պետք է ներառեն «միջավայրի պահպանման նվազագույն չափանիշները»: Սրա օգտին կարծիք հայտնողներն են աշխարհի 2 ամենաշատ զարգացող տնտեսությունները՝ Չինաստանը եւ Հնդկաստանը: Չինացիները 85% եւ 8% հարաբերակցությամբ կողմ են շրջակա միջավայրի պահպանմանը. իսկ հնդիկները համակարծիք են 60%-28% հարաբերակցությամբ: Միակ բացառությունը կազմում է Ֆիլիպինները, որտեղ կարծիքները հավասարապես բաժանված են (48% կողմ, 49% դեմ):

Առեւտուր եւ աշխատանք

էական մտավախություն աշխատատեղերի վրա առեւտրի ազդեցության ուղղությամբ առկա է հատկապես ավելի զարգացած երկրներում: Ֆրանսիացիների 80%-ն այն կարծիքին է, որ առեւտուրն իրենց երկրում բացասական ազդեցություն ունի աշխատատեղերի պահպանման եւ 73%-ը՝ աշխատատեղերի ստեղծման գործում: ԱՄՆ-ում 67%-ը կարծում է, որ առեւտուրը բացասական ազդեցություն ունի ամերիկյան աշխատատեղերի պահպանման, իսկ 60%-ը՝ աշխատատեղերի ստեղծման վրա: Չնայած արգենտինացիները եւ հարավային կորեացիները հակված են ասելու, որ առեւտուրը լավ է աշխատատեղերի ստեղծման համար, այնուամենայնիվ, նրանց կարծիքը կիսված է այն առումով, թե արդյոք առեւտուրը օգնում է աշխատատեղերի պահպանման հարցում:

Հարցման մասնակցած այլ երկրներում մեծամասնությունը առեւտուրը դրական է համարում աշխատատեղերի ստեղծման համար, իսկ մեծամասնությունը կամ շատերը կարծում են, որ այն լավ է աշխատատեղերի պահպանման համար: Իսրայելցիները, մեքսիկացիները եւ թաիլանդցիները (յուրաքնչյուրը 74%) ամենալավատեսն են, քանզի կարծում են, որ առեւտուրը օգնում է աշխատատեղերի ստեղծմանը: Գերակշռող մեծամասնությունը, որ ասում է՝ առեւտուրը լավ է աշխատանքի ապահովման համար, չինացիներն են (65%), իսկ հնդիկները (49% լավ, 39% վատ) եւ ռուսները (43% լավ, 32% վատ) այս հարցի վերաբերյալ ամենակասկածամիտներից են:

Աշխատանքի վրա առեւտրի ունեցած ազդեցության վերաբերյալ մտավախությունը արտահայտվում է նաեւ արտաքին քաղաքականության նպատակներին առնչվող մի հարցում: 7 երկրներում մարդկանց խնդրել էին գնահատել արտաքին քաղաքականության հնարավոր նպատակների կարեւորությունը, ինչպես նաեւ իրենց երկրների աշխատողների «աշխատատեղերի պահպանումը»: Բոլոր 7 երկրներում էլ մեծամասնությունը այս նպատակին ամենաբարձր՝ «շատ կարեւոր» գնահատականը տվեց. Հայաստանում՝ 84%, Ավստրալիայում՝ 83%, ԱՄՆ-ում՝ 76%, Չինաստանում՝ 71%, Հարավային Կորեայում՝ 68%, Թաիլանդում՝ 66%, եւ Հնդկաստանում՝ 54%:

Աշխատանքի վրա առեւտրի ունեցած ազդեցության վերաբերյալ մտավախությունը զարգացած երկրների ղեկավարներին մղել է պահանջելու, որպեսզի առեւտրային պայմանագրերում ներառեն աշխատանքային չափանիշեր, որոնք այդ պայմանագրերի տակ ստորագրող երկրներից կպահանջեն համապատասխանել աշխատանքի միջազգային այնպիսի չափանիշերին, ինչպիսիք են երեխաների աշխատանքի արգելումը եւ աշխատողներին արհեստակցական միություններ ստեղծելու հնարավորության ընձեռումը: Նրանք ասում են, որ այսպիսի չափանիշերը կկանխեն այն առեւտրային ընկերությունների «մրցակցությունը», որոնք ավելի ցածր ծախսերի որոնումներով տեղափոխվում են այնպիսի երկրներ, որտեղ չկա աշխատավորի նվազագույն պաշտպանություն:

Ինչպես բնապահպանության չափանիշները, ընդդիմախոսները այստեղ եւս ասում են, որ աշխատանքային պաշտպանվածության պահանջները առեւտրային պայմանագրերում ներառելը ծախսերի բարձրացման եւ ներդրումների կրճատման միջոցով զարգացած երկրներին վնաս կհասցնի:

Զարմանալի չէ, որ զարգացած երկրներում հարցմանը մասնակցողների գերակշիռ մեծամասնությունը կողմնակից է, որպեսզի այդպիսի չափանիշներն ընդգրկվեն առեւտրի միջազգային պայմանագրերում: Յուրաքանչյուր 10 ամերիկացիներից 9-ը, այսինքն՝ 93%-ը, իսրայելցիների 91%-ը, արգենտինացիների 89%-ը եւ լեհերի 88%-ը համակարծիք են:

Սակայն առեւտրային պայմանագրերում աշխատատեղերի պահպանման հարցի ներառմանը կողմնակից են նաեւ բազմաթիվ քիչ զարգացած երկրներ, որոնք ունեն աշխատուժի էժան շուկա: Այս հարցին կողմնակից են չինացիների 84%, ինչպես նաեւ մեծամասնությունը Մեքսիկայում (67%), Հնդկաստանում (56%) եւ Ֆիլիպիններում (55%):

Սա հակասում է այն համատարած ենթադրությանը, որ զարգացող երկրների աշխատուժը դեմ կլինի բարձր չափանիշների կիրառման պահանջին, քանզի նրանք ցանկանում են ունենալ այն մրցակցային առավելությունները, որոնք ածանցվում են ցածր աշխատանքային ծախսերից: Հնարավոր է, որ բարձր չափանիշների պահանջը գայթակղիչ լինի, քանզի այն դրսից ճնշում է առաջացնում իրենց երկրներում աշխատանքային պայմանների բարելավման համար:

Առեւտրի համաշխարհային կազմակերպության կանոններին ենթարկվելը

Չնայած հարցվողներն, ընդհանուր առմամբ, կողմ են միջազգային առեւտրին որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ, նրանք ավելի քիչ խանդավառ են Առեւտրի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) նկատմամբ, որը ստեղծվել էր 1995թ-ին՝ առեւտրային օրենքները կիրառելու եւ անդամ երկրների միջեւ ծագած միջազգային առեւտրային վեճերը լուծելու համար: Երկրների մեծամասնությունը, ընդհանուր առմամբ, ենթարկվում են ԱՄԿ-ի կողմից իրենց դեմ կայացված որոշումներին, սակայն կան նաեւ էական տարբերություններ:

Տեղեկացնելով, որ ԱՄԿ-ն «ստեղծվել էր առեւտրային պայմանագրերի վերաբերյալ ծագած վեճերը կարգավորելու համար», 8 երկրներում մարդկանց հարցվել էր՝ «Եթե մեկ այլ երկիր բողոք ներկայացնի ԱՄԿ-ին, եւ վերջինս որոշում կայացնի ի վնաս ձեր երկրի, ապա ձեր երկիրը պետք է ենթարկվի՞ այս որոշմանը»:

Չնայած միջազգային առեւտրի հանդեպ իրենց վերպահմանը, ԱՄՆ-ի հասարակությունը ցուցադրում է ԱՄԿ-ի որոշումներին ենթարկվելու ուղղությամբ ամենաբարձր աջակցությունը: Ամերիկացիների 73%-ն ասում է, որ պետք է ենթարկվել այդ որոշմանը: Այս տվյալները փոքր-ինչ աճել են 2004 թվականի համեմատությամբ, երբ միայն 69%-ն էր կողմ: ԱՄԿ-ի որոշումներին ենթարկվելու ամերիկացիների հակվածությունը համահունչ է այն աջակցությանը, որը նրանք ցուցաբերել են բազմակողմ կառույցների ամրապնդմանը հակված այս եւ այլ հարցախույզերին:

Երկու այլ երկրներում՝ Չինաստանում (58%) եւ Մեքսիկայում (53%), մեծամասնությունը նույնպես կողմ է ԱՄԿ-ի որոշումներին ենթարկվելուն: Մեքսիկացիների աջակցությունը 2004-ից ի վեր աճել է 5 նիշով:

Երեք երկրներում էլ նեղ մեծամասնությունը կողմնակից է ԱՄԿ-ի որոշումներին ենթարկվելուն: Դրանք են՝ Հնդկաստանը (37% այո, 29% ոչ), Թաիլանդը (34% այո, 17% ոչ) եւ Ուկրաինան (40% այո, 12% ոչ):

Բոլոր 3 երկրներում էլ էական զգալի փոքրամասնություններն ասում են՝ «Կախված է հանգամանքներից» կամ էլ «Չգիտի»:

Հարավային Կորեան միակ երկիրն է, որտեղ մեծամասնությունը (52% ոչ, 37% այո) դեմ է ԱՄԿ-ի որոշմանը ենթարկվելուն: Չնայած որոշմանը չենթարկվելու միտումը նույնն է մնացել 2004 թվականից ի վեր (52%), ենթարկվելու կարծիքը 48%-ից նվազել է 11 նիշով: Հարավային կորեացիները վերջին տարիներին տուժել են ԱՄԿ-ի կողմից իրենց դեմ կայացված որոշումներից, որոնք վերաբերում են նավաշինությանն ու համակարգչային չիպերի արդյունաբերությանը: ԱՄԿ-ն Հարավային Կորեային նաեւ պարտադրել է, որպեսզի վերջինս իր շուկան բացի բրնձի ներմուծման համար:

«35% ոչ, 26% այո» հարաբերակցությամբ հայերն, ընդհանուր առմամբ, դեմ են ենթարկվելուն, սակայն շատ թվով հայեր (38%) վստահ չեն եւ ասում են՝ «Կախված է հանգամանքներից» կամ «Չգիտի»: Ֆիլիպինցիները այս հարցում բաժանված են (48% այո, 49% ոչ):

Գլոբալացում եւ Առեւտուր. Արդյունքներ ըստ երկրների

Ամերիկյան մայրցամաք

ԱՐԳԵՆՏԻՆԱ
Գրասիելա Ռյոմեր եւ ընկերներ, դեկտեմբեր 2006

Չնայած որոշ արգենտինացիներ իրենց երկրում 2001թ. տեղի ունեցած տնտեսական ճգնաժամի համար պատճառ են համարում գլոբալացումը, նրանք, ընդհանուր առմամբ, այն կարծիքին են, որ գլոբալացումը օգտակար է իրենց երկրի եւ տնտեսության համար: Այնուամենայնիվ, նրանք թերահավատորեն են վերաբերվում անհատների եւ միջավայրի վրա միջազգային առեւտրի ազդեցությանը: Արգենտինացիների 55%-ն ասում է, որ գլոբալացումը, «հատկապես մեր տնտեսության աճող կապերը աշխարհի այլ տնտեսությունների հետ», «մեծամասամբ լավ է» իրենց երկրի համար, եւ միայն 22%-ն է ասում, որ այն, ընդհանուր առմամբ, վատ է, իսկ 23%-ն էլ կարծիք չի հայտնել: Հարցման մասնակցած այլ հանրությունների նման արգենտինացիների մեծամասնությունը նույնպես ասում է, որ միջազգային առեւտուրն, ընդհանուր առմամբ, լավ է Արգենտինայի տնտեսության (65%) եւ ընկերությունների (61%) համար: Սակայն համաձայնության տոկոսը ավելի ցածր է, երբ խոսքը վերաբերում է նրան, որ միջազգային առեւտուրը հենց արգենտինացիների համար լավ է, թե ոչ: Արգենտինացիների 46%-ը կարծում է, որ առեւտուրը լավ է «իրենց նման սպառողների» համար: Սա հարցմանը մասնակցած բոլոր երկրներից ամենացածր տոկոսն է, սակայն 31%-ը ասում է, որ այն վատ է իրենց համար, իսկ 23%-ը չի պատասխանել: Արգենտինացիները հարցմանը մասնակցողներից ամենաքիչ վստահներից են, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց «կենսամակարդակի» համար: 42%-ն ասում է, որ այն լավ է, իսկ 30%-ը՝ վատ: Արգենտինացիների նեղ մեծամասնությունը (53%) ասում է, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց երկրում աշխատատեղերի ստեղծման համար, սակայն նրանց կարծիքը կիսվում է, երբ խոսքը գնում է այն մասին, թե առեւտուրը դրական է կամ բացասական «արգենտինացի աշխատուժի աշխատանքային երաշխիքի» համար (38% լավ, 39% վատ, 23%-ը չի պատասխանել): Այն կասկածները, թե աշխատողներն իրոք կշահեն առեւտրից, կարող է լինել այն պատճառը, որ արգենտինացիները (89%) մեծապես կողմ են, որպեսզի «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները» ներառվեն առեւտրային պայմանագրերում: Արգենտինացիները կասկածամտորեն են վերաբերվում, թե միջազգային առեւտուրը շրջակա միջավայրի համար լավ է. 46%-ն ասում է, որ այն վատ է, 27%-ը՝ լավ: Հարցմանը մասնակցած յուրաքանչյուր 10 արգենտինացուց 9-ը (90%) ուզում է, որպեսզի բնապահպանության պայմանները ներառվեն առեւտրային պայմանագրերում:

ՄԵՔՍԻԿԱ
Տնտեսական հետազոտությունների եւ ուսուցման կենտրոն (ՏՀՈՒԿ) / Արտաքին հարաբերությունների մեքսիկական խորհուրդ (COMIEXI), հուլիս 2006

Մեքսիկացիները գլոբալացումը եւ միջազգային առեւտուրը դրական են գնահատում իրենց երկրի համար, սակայն նրանց կարծիքները տարբերվում են միջավայրի վրա ունեցած ազդեցության հարցում: Ամենատարածված կարծիքն այն է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ է» Մեքսիկայի համար (41%), ըստ 1/4-ի (26%) այն հավասարապես լավ է ու վատ, իսկ 1/5-ը (22%) ասում է, որ այն «ընդհանուր առմամբ վատ է»: Մեքսիկացիները դրական են տրամադրված միջազգային առեւտրի նկատմամբ: Ըստ մեծամասնության, առեւտուրը դրական է Մեքսիկայի տնտեսության (59%) եւ կենսամակարդակի (53%) համար: 2/3-ը (66%) այն կարծիքին է, որ առեւտուրը լավ է մեքսիկական ընկերությունների, իսկ մոտավորապես 3/4-ը (74%) ասում է, որ այն լավ է երկրում աշխատատեղ ստեղծելու համար: 67%-ը համաձայն է, որ առեւտրի միջազգային պայմանագրերի տակ ստորագրող երկրներից հարկավոր է պահանջել, որպեսզի վերջիններս պահպանեն «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները»: Մեքսիկացիները տարբեր կարծիքներ են հայտնում շրջակա միջավայրի համար միջազգային առեւտրի լավ կամ վատ լինելու հարցի վերաբերյալ. 41%-ն ասում է, որ այն վատ է, կրկին 41%՝լավ, իսկ 19%-ը չի պատասխանել: Մեքսիկացիների 3/4-ը (76%) ասում

է, որ առեւտրային պայմանագրերը պետք է երկրներից պահանջեն, որպեսզի վերջիններս պահպանեն «բնապահպանության նվազագույն չափանիշները»: Մեծամասնությունն (53%) այն կարծիքին է, որ Մեքսիկան պետք է, ընդհանուր առմամբ, ենթարկվի Առեւտրի միջազգային կազմակերպության կողմից իրենց դեմ կայացված որոշումներին, մոտավորապես 1/5-ը (21%) հակառակ կարծիքին է, իսկ ըստ 18%-ի՝ կախված է հանգամանքներից:

ԱՄՆ
Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ, հուլիս 2006

Ամերիկացիների մեծամասնությունն ասում է, որ գլոբալացումը օգտակար է իրենց երկրի համար, սակայն նրանք, ընդհանուր առմամբ, այն կարծիքին են, որ միջազգային առեւտուրը վատ է ամերիկյան աշխատատեղերի եւ միջավայրի համար: 60%-ն ասում է, որ գլոբալացումը եւ «հատկապես մեր տնտեսության հետզհետե աճող կապերն աշխարհի այլ տնտեսությունների հետ» «մեծամասամբ լավ» է ԱՄՆ-ի համար, իսկ ըստ 35%-ի՝ այն «ընդհանուր առմամբ վատ» է: Ամերիկացիների մի նեղ մեծամասնություն ասում է, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց երկրի տնտեսության (54%) եւ ամերիկյան ընկերությունների (52%) համար, սակայն այդ մեծամասնությունն ավելի փոքր է այս հարցմանը մասնակցած այլ երկրների համեմատությամբ: էական մեծամասնությունը, սակայն, այն կարծիքին է, որ առեւտուրը լավ է իրենց նման սպառողների (70%) եւ իրենց կենսամակարդակի (64%) համար: Ամերիկացիները ֆրանսիացիներից հետո երկրորդն են, ովքեր ասում են, որ առեւտուրը վնաս է հասցնում զբաղվածությանը: Մեծամասնությունն այն կարծիքին է, որ միջազգային առեւտուրը վատ է ԱՄՆ-ում «աշխատատեղերի ստեղծման» (60%) եւ ամերիկացի աշխատողների «աշխատանքային երաշխիքի» (67%) համար: Ամերիկացիների ծանրակշիռ մի մեծամասնություն (96%) ասում է, որ «ամերիկացի աշխատողների աշխատատեղերը պահպանելը» արտաքին քաղաքականության շատ կարեւոր (76%) կամ համեմետաբար կարեւոր (20%) նպատակ է: Աշխատատեղերի հանդեպ ամերիկացիների մտահոգությունն արտացոլում է իրենց շատ ուժգին աջակցությունը (93%) առեւտրային պայմանագրերում «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշների» ներառվելուն: Ըստ 49%-ի, առեւտուրը վատ է միջավայրի համար, իսկ ըստ 45%-ի՝ լավ: Ամերիկացիների 9/10-ը (91%) ուզում են, որ առեւտրային պայմանագրերի տակ ստորագրող երկրներից պահանջվի, որ վերջիններս ապահովեն բնապահպանության պայմանները: Ամերիկացիների գերակշիռ մեծամասնությունն այն կարծիքին է, որ ԱՄՆ-ին հարկավոր է ենթարկվել Առեւտրի միջազգային կազմակերպության կողմից իր դեմ կայացված որոշումներին: 3/4-ը (73%) ասում է, որ ԱՄՆ-ի կարավառությունը, «որպես ընդհանուր կանոն», պետք է ենթարկվի ԱՄԿ-ի որոշումներին, եւ միայն 1/5-ն (22%) է հակառակ կարծիքին:

<u>Ասիա</u>

ԱՎՍՏՐԱԼԻԱ
Լովի ինստիտուտ, հուլիս 2006

Ավստրալիացիների մեծամասնությունը գլոբալացմանը դրականորեն են մոտենում եւ այն կարծիքին են, որ ավստրալիացիների աշխատատեղերի պահպանումը պետք է լինի արտաքին քաղաքականության նպատակ: 65%-ն ասում է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ» է իրենց երկրի համար, իսկ միայն 1/4-ը (27%) հակառակ կարծիքին է: Ավստրալիացիները նաեւ գրեթե միաձայն (98%) այն կարծիքին են, որ ավստրալիական աշխատուժի աշխատատեղերի պահպանումը պետք է լինի արտաքին քաղաքականության կարեւոր մի նպատակ, սա նաեւ ներառում է 83%-ը, ըստ որի այն համարվում է «շատ կարեւոր»:

ՉԻՆԱՍՏԱՆ
Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ, հուլիս 2006

Չինացիներն այն ժողովրուդներից են, ովքեր դասվում են գլոբալացման եւ առեւտրի օգուտների հանդեպ ամենաջերմեռանդների թվին: Նրանց մոտավորապես 9/10-ն (87%) ասում

է, որ «մեր տնտեսական կապերի զարգացումն այլ երկրների հետ» մեծամասամբ լավ է Չինաստանի համար, եւ սա հարցախույզին մասնակցած 18 երկրների շարքում ամենամեծ տոկոսն է կազմում: Չինացիները նաեւ միջազգային առեվտրի ազդեցության վերաբերյալ ամենադրական կարծիք տածողներից են: Մեծ թվով չինացիներ ասում են, որ առեվտուրը լավ է իրենց երկրի տնտեսության (88%), ընկերությունների (78%), ժողովրդի կենսամակարդակի (73%) եւ չինացի սպառողների (69%) համար: Առեվտրի հանդեպ այս դրական վերաբերմունքը նաեւ արտացոլվում է չինական աշխատատեղերի հանդեպ ունեցած ազդեցության վրա: Մոտավորապես 7/10-ը ասում է, որ առեւտուրը լավ է Չինաստանում աշխատատեղերի ստեղծման (73%) եւ չինացի աշխատավորների աշխատանքային երաշխիքների ապահովման համար (65%): Չինացիների 9/10-ը (92%) ասում է, որ «չինացի աշխատավորների աշխատատեղերի պահպանումը» արտաքին քաղաքականության շատ (71%) կամ որոշակիորեն (21%) կարեւոր մի նպատակ է: Գրեթե նույնքան մարդիկ (84%) այն կարծիքին են, որ «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները» պետք է առեւտրի միջազգային պայմանագրերի մաս կազմեն: Այլ ժողովրդներին հակառակ, չինացիները մեծամասամբ (57%) հավատում են, որ միջազգային առեւտուրը լավ է միջավայրի համար, իսկ միայն 29%-ը հակառակ կարծիքին է: Այնուամենայնիվ, չինացիների ավելի քան 4/5-ը (85%) կողմ է, որ առեւտրային պայմանագրերում ներառեն բնապահպանության նորմեր: Չինացիներն այն կարծիքին են, որ Չինաստանին հարկավոր է ենթարկվել Առեւտրի միջազգային կազմակերպության կողմից իր դեմ կայացված որոշումներին. 58%-ը այն կարծիքին է, որ Չինաստանը, որպես ընդհանուր կանոն, պետք է ենթարկվի այս որոշումներին, 19%-ը հակառակն է պնդում, իսկ ըստ 16%-ի՝ կախված է հանգամանքներից:

ՀՆԴԿԱՍՏԱՆ
Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ, հուլիս 2006

Հնդիկների մեծամասնությունը հավատացած է, որ գլոբալացումը օգտակար է իրենց երկրի համար, իսկ միջազգային առեւտուրը՝ դրական իրենց տնտեսության եւ միջավայրի համար: Հնդիկների 54%-ը այն կարծիքին է, որ գլոբալացումը եւ «մեր երկրի՝ հետզհետե աճող տնտեսական կապերի զարգացումն այլ երկրների հետ» «մեծամասամբ լավ է», իսկ 30%-ը հակառակ կարծիքին է: Միջազգային առեվտուրը լավ է ընկալվում Հնդկաստանի տնտեսության (64%) եւ ընկերությունների (59%) համար: Մեծամասնությունը (61%) կարծում է, որ առեւտուրը լավ է «Ձեզ նման սպառողների», իսկ ըստ 54%-ի՝«Ձեր կենսապայմանի» համար: Հնդիկների 56%-ն ասում է, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց երկրում աշխատատեղերի ստեղծման համար, իսկ նրանցից 1/3-ը (32%) ասում է, որ այն վատ է: Հնդիկների մոտավորապես 1/2-ը (49%) ասում է, որ առեւտուրը լավ է հնդիկ աշխատուժի աշխատանքային երաշխիքների համար, իսկ 37%-ը հակառակ կարծիքին է: Հնդիկների ավելի քան 8/10-ը (84%) այն կարծիքին է, որ տեղական աշխատատեղերի պահպանումը արտաքին քաղաքականության կարեւոր մի նպատակ է, սակայն այս ժողովուրդների համեմատ նրանք ավելի քիչ են շեշտում, որ այն շատ կարեւոր մի նպատակ է (54%): Հակառակ այն համատարած կարծիքին, որ զարգացող երկրների հասարակությունը դեմ է աշխատանքային չափանիշներին, որպեսզի առավելություն ստանան ախատանքի համամոլորակային շուկայում, մեծամասությունն ասում է, որ առեւտրի միջազգային պայմանագրերը երկրներից պետք է պահանջեն, որպեսզի վերջիններս պահպանեն աշխատանքային պայմանների (56%) եւ բնապահպանության (60%) նվազագույն չափանիշները: Հնդիկները այլ վերաբերմունք են ցուցաբերում այն հարցի նկատմամբ՝ իրենց երկիրը պետք է ենթարկվի առեւտրի միջազգային կազմակերպության կողմից Հնդկաստանի դեմ կայացված որոշումներին. 37%-ն ասում է, որ այն, որպես ընդհանուր կանոն, պետք է ենթարկվի, 29%-ն հակառակ կարծիքին է, եւ 21%-ն էլ ասում է, որ այն կախված է հանգամանքներից:

ԻՆԴՈՆԵԶԻԱ
Լովի ինստիտուտ, հուլիս 2006

Ինդոնեզիացիների մեծամասնությունը կարծում է, որ գլոբալացումն, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն ունի իրենց երկրի վրա: Այն հարցին, թե գլոբալացումը «հատկապես

մեր տնտեսության՝ հետզհետե աճող կապերը այլ երկրների հետ» մեծամասամբ լավ է կամ վատ Ինդոնեզիայի համար, 61%-ն ասում է, որ այն, ընդհանուր առմամբ, լավ է, իսկ 31%-ն հակառակ կարծիքին է:

ՖԻԼԻՊԻՆՆԵՐ
Սոցիալական եղանակի կայան, նոյեմբեր 2006

Ֆիլիպինցիները մեծամասմաբ կարծում են, որ գլոբալացումը լավ է իրենց երկրի համար, սակայն նրանք այս հարցմանը մասնկացած ժողովուրդների թվում ամենակասկածամիտներից են: Ֆիլիպինցիների կարծիքը եւս բաժանվում է այն հարցում, թե իրենց կառավարությունը արդյոք պետք է ենթարկվի Առեւտրի միջազգային կազմակերպության որոշումներին: Չնայած, որ ֆիլիպինցիների միայն կեսը կարծում է, որ գլոբալացումը լավ է իրենց երկրի համար, դրական վերաբերմունքը 49% եւ 32% հարաբերակցությամբ գերակշռում է բացասական կարծիքին, իսկ 20%-ն այս հարցին չի պատասխանել: Հարցմանը մասնակցողների մեծամասնությունը (55%) կարծում է, որ «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները» պետք է ներառվեն առեւտրային պայմանագրերում, բայց կարծիքները գրեթե հավասար կիսվում են այն հարցին, թե բնապահպանության չափանիշները պիտի (48%) կամ չպիտի (49%) ընդգրկվեն: Այն հարցին, թե ֆիլիպինցիները «որպես ընդհանուր կանոն» պետք է ենթարկվեն առեւտրի միջազգային կազմակերպության կողմից իրենց երկրի դեմ կայացված որոշումներին, ֆիլիպինցիները կրկին հավասարապես բաժանված են՝ 48%-ն ասում է, որ պետք է ենթարկվի, իսկ ըստ 49%-ի՝ ոչ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ
Արեւելյան Ասիայի ինստիտուտ, հուլիս 2006

Հարավային կորեացիներից շատերն այն կարծիքին են, որ գլոբալացումը լավ է իրենց երկրի համար, եւ միջազգային առեւտուրը, բացառությամբ շրջակա միջավայրի, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն ունի: 10 հարավային կորեացիների գրեթե 9-ը (86%) ասում է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ» է իրենց երկրի համար, եւ այս արդյունքը չինացիներից հետո կազմում է գերակա մեծամասնությունը: Շատ քչերը (12%) հակառակ կարծիքին են: Յուրաքանչյուր 10 կորեացուց 8-ը (79%) ասում է, որ միջազգային առեւտուրը լավ է Հարավային Կորեայի տնտեսության, ընկերությունների (78%) եւ աշխատատեղերի ստեղծման (60%) համար: Սակայն անհատների վրա առեւտրի ազդեցության նկատմամբ վերաբերմունքը փոքր-ինչ պակաս դրական է՝ 68%-ն ասում է, որ միջազգային առեւտուրը լավ է «Ձեզ նման սպառողների» համար, եւ 56%-ն ասում է, որ այն օգտակար է «Ձեր իսկ կենսամակարդակի» համար: Միայն 51%-ն այն կարծիքին է, որ առեւտուրը լավ է հարավային կորեացի աշխատավորների աշխատանքային երաշխիքների ապահովման համար, իսկ 47%-ն հակառակ կարծիքին է: Գրեթե բոլոր հարցվողները (97%) տեղական աշխատատեղերի պահպանումը ընկալում են որպես մի հարց, որը պետք է լինի Հարավային Կորեայի արտաքին քաղաքականության կարեւոր նպատակներից մեկը: Սա նաեւ ներառում է այն 68%-ը, որը ասում է, որ այն շատ կարեւոր է: Հարավային կորեացիները գրեթե հավասարապես կիսված են միջազգային միջավայրի վրա առեւտրի ազդեցության վերաբերյալ: 49%-ն ասում է, որ այն վատ ազդեցություն ունի, իսկ 47%-ը՝ լավ: Նրանք 52% եւ 37% հարաբերակցությամբ նույնպես այն կարծիքին են, որ Հարավային Կորեան «որպես ընդհանուր կանոն» չպետք է ենթարկվի առեւտրի միջազգային կազմակերպության կողմից իրենց երկրի դեմ կայացված որոշումներին, իսկ 10%-ն ասում է՝ կախված է հանգամանքներից: Հայաստանը Հարավային Կորեայից բացի մյուս երկիրն է այն 7 երկրների շարքում, ուր այս հարցն է քննարկվել, եւ ուր ժողովուրդն, ընդհանուր առմամբ, կողմ է վերոնշյալ որոշումներին չենթարկվելուն:

ԹԱԻԼԱՆԴ
ABAC հարցախույզի հետազոտական կենտրոն, սեպտեմբեր 2006

Թաիլանդցիներն, ընդհանուր առմամբ, գլոբալացմանը դրականորեն են վերաբերվում, եւ հավատացած են, որ միջազգային առեւտուրը կնպաստի իրենց երկրի տնտեսությանը,

ընկերություններին, աշխատավորներին եւ սպառողներին: Թաիլանդցիների 3/4-ը (75%) ասում է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ» է իրենց երկրի համար, իսկ միայն 8%-ը հակառակ կարծիքին է: Թաիլանդցիների մեծամասնությունը նաեւ այն կարծքին է, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց տնտեսության (79%) եւ ընկերությունների (70%) համար: Գերակշիռ մեծամասնությունները եւս ասում են, որ առեւտուրը շահավետ է անհատ թաիլանդցիների համար: Ըստ 65%-ի, այն օգնում է իրենց երկրի սպառողներին եւ բարձրացնում է կենսամակարդակը (59%): Թաիլանդցիների մոտավորապես 3/4-ը (74%) այն կարծիքին է, որ միջազգային առեւտուրը լավ է իրենց երկրում աշխատատեղերի ստեղծման համար, իսկ ըստ 2/3-ի (64%) այն օգնում է, որպեսզի թաիլանդցիների աշխատատեղերը երաշխավորվեն: Տեղական աշխատատեղերի երաշխավորումը ընկալվում է որպես արտաքին քաղաքականության կարեւոր մի նպատակ: 85%-ն ասում է, որ «թաիլանդցի աշխատավորների աշխատատեղերի պահպանումը» պետք է լինի արտաքին քաղաքականության շատ (66%) կամ որոշակիորեն (18%) կարեւոր մի նպատակ: Թաիլանդցիներն ավելի քիչ համոզմունք են հայտնում, որ առեւտուրը լավ է միջավայրի համար, սակայն սա 45%-35% հարաբերակցությամբ ամենատարածված կարծիքն է: Յուրաքանչյուր 10 թաիլանդցուց 7-ն (69%) ասում է, որ «բնապահպանության նվազագույն չափանիշները» պետք է ներառվեն առեւտրային պայմանագրերում: Նրանց կարծիքները տարբերվում են, երբ խոսքը վերաբերում է այն ամենին, ինչն իրենց կառավարությունը պետք է անի, եթե իր դեմ որեւիցե բողոքի արդյունքում Առեւտրի միջազգային կազմակերպությունը որոշում կայացնի նրա դեմ: 34%-ն ասում է, որ այն որպես ընդհանուր կանոն պետք է ենթարկվի այդ որոշմանը, 17%-ը հակառակ կարծիքին է, իսկ 25%-ն ասում է, որ դա կախված է հանգամանքներից, 1/4-ը (24%) այս հարցին չի պատասխանել:

<u>Մերձավոր Արեւելք</u>

ԻՐԱՆ
Համաշխարհային հասարակական կարծիք, դեկտեմբեր 2006

Իրանցիների մեծամասնությունը գլոբալացումը դրական է գնահատում իրենց երկրի համար: Այն հարցին, թե գլոբալացումը «հատկապես մեր տնտեսության հետզհետե աճող կապերը այլ երկրների հետ» մեծամասամբ լա՞վ է, թե վատ Իրանի համար, նկատելի մեծամասությունը (63%) ասում է, որ այն, ընդհանուր առմամբ, լավ է, իսկ ավելի քիչ, քան 1/3-ը (31%) հակառակ կարծիքին է:

ԻՍՐԱՅԵԼ
Խաղաղության ուսումնասիրության Թամի Շթայնմեցի կենտրոն, նոյեմբեր 2006

Իսրայելցիները դասվում են այն ժողովուրդների շարքին, ովքեր ամենադրական վերաբերմունքն են ցուցաբերում գլոբալացման եւ միջազգային առեւտրի օգուտների նկատմամբ: Իսրայելցիների ավելի քան 4/5-ը (82%) կարծում է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ» է իրենց երկրի համար, իսկ միայն 10-ից մեկը հակառակ կարծիքին է: Միջազգային առեւտուրը նույնպես դրական է գնահատվում: Զգալի մեծամասությունը կարծում է, որ այն լավ է Իսրայելի տնտեսության (88%) եւ ընկերությունների (86%) համար, եւ այս հարցմանը մասնակցած բոլոր հասարակությունների մեջ սա ամենամեծ տոկոսն է կազմում: Մոտավորապես 3/4-ը առեւտուրը նույնպես դրական գնահատում է իսրայելցիների համար: 77%-ն ասում է, որ այն լավ է «Ձեզ նման սպառողների», իսկ 74%-ը՝ «Ձեր իսկ կենսամակարդակի» համար: Յուրաքանչյուր 4 իսրայելցուց 3-ը միջազգային առեւտուրը իսրայելցիների համար դրական է գնահատում աշխատատեղերի ստեղծման առումով (74%), եւ մեծամասությունը այն կարծիքին է, որ այն նույնպես լավ է աշխատանքային երաշխիքի համար (63%): Գերակշիռ մեծամասությունը (91%) արտահայտում է այն համոզմունքը, որ երկրները առեւտրային պայմանագրեր ստորագրելիս ընդունեն «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները»: Իսրայելը այն 3 երկրներից է, որտեղ մեծամասնությունը (56%) կարծում է, որ առեւտուրը լավ է միջավայրի համար, իսկ միայն 1/4-ը (23%) հակառակ կարծիքին է: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր 10 իսրայելցուց 9-ը (93%) նաեւ այն կարծիքին է,

որ առեւտրային պայմանագրերը պետք է ներառեն բնապահպանության նվազագույն չափանիշները:

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ
Հասարակական կարծիքի պաղեստինյան կենտրոն, հոկտեմբեր 2006

Պաղեստինցիներից շատերն ասում են, որ գլոբալացումը եւ միջազգային առեւտուրն, ընդհանուր առմամբ, լավ է պաղեստինցիների եւ իրենց տնտեսության համար: Նրանք նաեւ այն քիչ թվով ժողովուրդներից են, ովքեր կարծում են՝ առեւտուրը լավ է միջավայրի համար: 58%-ն ասում է, որ գլոբալացումը եւ «մեր տնտեսության հետզհետե աճող կապերը այլ երկրների հետ հատկապես», ընդհանուր առմամբ, լավ են իրենց տնտեսության համար, մինչդեռ միայն 28%-ը հակառակ կարծիքին է: Պաղեստինցիները մշտապես միջազգային առեւտուրը եւս դրականորեն են գնահատում իրենց տնտեսության (70%) եւ պաղեստինյան ընկերությունների (67%) համար: Պաղեստինցիները նաեւ համակարծիք են, որ առեւտուրը նպաստում է իրենց իսկ կենսամակարդակին (62%), իրենց նման սպառողներին (57%), ինչպես նաեւ աշխատատատեղերի ստեղծման (62%) եւ աշխատանքի երաշխիքի (57%) համար: Պաղեստինցիների 53%-ն դիտում են միջազգային առեւտուրը որպես միջավայրի վրա դրական ազդեցություն ունեցող ոլորտ, իսկ 1/3-ը (32%) հակառակն է պնդում:

<u>Եվրոպա</u>

ՀԱՅԱՍՏԱՆ
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, դեկտեմբեր 2006

Հայերի մեծամասնությունը գլոբալացմանը դրական է վերաբերվում եւ այն կարծիքին է, որ միջազգային առեւտուրը դրական ազդեցություն ունի իրենց տնտեսության եւ իրենց անհատական կացության վրա: Հայերի 65%-ն ասում է, որ գլոբալացումը «մեծամասամբ առմամբ լավ է» Հայաստանի համար, իսկ 1/5-րդից քիչ մարդիկ էլ (18%) կարծում են, որ այն «ընդհանուր առմամբ վատ է»: Հայերի 3/4-ը (75%) միջազգային առեւտուրը համարում է լավ երեւույթ իրենց տնտեսության, իսկ 64%-ը՝ Հայաստանի ընկերությունների համար: Համեմաբատաբար ավելի ստվար մեծամասնությունն այն կարծիքին է, որ միջազգային առեւտուրը լավ է հենց հայերի համար: 60%-ն ասում է, որ այն դրական է իրենց կենսամակարդակի համար, եւ 56%-ը կարծում է, որ այն լավ է իրենց՝ որպես սպառողների համար: Հայերի մեծամասնությունը (61%) ասում է, որ միջազգային առեւտուրը նպաստում է Հայաստանում աշխատատեղերի ստեղծմանը: Սակայն նեղ մեծամասնությունը (52%) ասում է, որ այն լավ է հայաստանյան աշխատուժի, աշխատատեղերի պահպանման համար, իսկ 1/4-ը (24%) կարծում է, որ այն վատ է: Հայերի համար տեղական աշխատատեղերի ստեղծումը կարեւոր հարց է. 94%-ն ասում է, որ «Հայաստանյան աշխատուժի աշխատանքային երաշխիքների պահպանումը» պետք է լինի արտաքին քաղաքականության կարեւոր մի նպատակ, իսկ նրանցից 84%-ն էլ այն համարում է շատ կարեւոր: Մեծամասնությունը (79%) այն կարծիքին է, որ «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշների ապահովումը» պետք է ներառվեն առեւտրային պայմանագրերում, իսկ բնապահպանության վրա միջազգային առեւտրի ունեցած ազդեցության նկատմամբ վերաբերմունքը տարբեր է. 37%-ն ասում է, որ այն լավ է, ըստ 36%-ի այն վատ է, իսկ 27%-ը չի պատասխանել: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր 5 հայաստանցուց 4-ը (82%) այն կարծիքին է, որ բնապահպանության պայմանները պետք է ներառվեն առեւտրային պայմանագրերում: Հայաստանը (Հարավային Կորեայի հետ միասին) այն երկու երկրներից մեկն է, ուր իրենց կառավարության՝ առեւտրի միջազգային կազմակերպության որոշումներին (որոնք համարում են իրենց ի վնաս) չենթարկվելն ամենահամատարած կարծիքն է,: Հայաստանցիների 35%-ն ասում է, որ Հայաստանը չպիտի ենթարկվի, ըստ 26%-ի պետք է ենթարկվի, իսկ 24%-ը ասում է «կախված է հանգամանքներից»:

ՖՐԱՆՍԻԱ
Արդյունավետություն 3, մարտ 2007–04–12

Ֆրանսիացիները, ամերիկացիների հետ միասին, այն ժողովուրդներից են, ովքեր կասկածամտություն են ցուցաբերում միջազգային առեվտրի օգուտների վերաբերյալ: Չնայած, որ ֆրանսիացիների նեղ մի մեծամասնություն այն կարծիքին է, որ գլոբալացումը դրական է իրենց երկրի համար, նրանք, մյուս ժողովրդների համեմատ, առավել հակված են դեպի բացասական վերաբերմունքը աշխատավորների եւ միջավայրի վրա դրա ունեցած ազդեցությանառումով: Ֆրանսիացիների 51%-ն ասում է, որ «մեր տնտեսության հետզհետե աճող կապերն աշխարհի այլ տնտեսությունների հետ» «մեծամասամբ լավ» է Ֆրանսիայի համար, իսկ 42%-ը հակառակ կարծիքին է: Սա, իմիջայլոց, հարցմանը մասնակցած 18 երկրներից ամենամեծ տոկոսն է կազմում: Չնայած, որ 64%-ն ասում է, որ միջազգային առեվտուրը օգտակար է ֆրանսիական տնտեսության, 34%-ը հակառակ կարծիքին է, ըստ 55%-ի՝ այն լավ է ֆրանսիական ընկերությունների համար, իսկ 43%-ը հակառակն է պնդում: Մեծամասնությունը ասում է, որ միջազգային առեւտուրը դրական է անհատական կենսամակարդակի համար, սակայն մեծ թվով մարդիկ հակառակ կարծիքին են: Ըստ 61%-ի, առեվտուրը լավ է իրենց նման սպառողների համար, 38%-ը հակառակ կարծիքին է, 50%-ն ասում է, որ այն լավ է իրենց իսկ կենսամակարդակի համար, իսկ 44%-ը հակառակն է պնդում: Ֆրանսիացիներից շատերը, այնուամենայնիվ, համաձայն են, որ միջազգային առեւտուրը աշխատատեղերի համար վատ է: 4/5-ն (80%) ասում է, որ առեւտուրը վնասակար է իրենց երկրում աշխատանքային երաշխիքներին եւ 3/4-ը (73%) կարծում է, որ այն բացասական ազդեցություն ունի տեղական աշխատատեղերի ստեղծման վրա, որն, իմիջիայլոց, այս հարցմանը մասնակցած 13 երկրներից ամենաբարձր տոկոսն է կազմում: Ֆրանսիացիները նաեւ ամենամեծ տոկոսն են կազմում այն հարցում, թե միջազգային առեւտուրը վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Այսպես, 2/3-ը (66%) հավատացած է, որ այն վատ է միջավայրի համար, իսկ 10 հարցվողներից երեքը, եւ նույնիսկ ավելի պակաս (29%) հակառակն է պնդում:

ԼԵՀԱՍՏԱՆ
CBOS, սեպտեմբեր 2006

Լեհերն, ընդհանուր առմամբ, հակված են այն մտքին, որ գլոբալացումը դրական է, եւ միջազգային առեւտուրը լավ է իրենց տնտեսության եւ միջավայրի համար: Լեհերի նեղ մեծամասությունը (52%) ասում է, որ գլոբալացումը «մեր տնտեսության հետզհետե զարգացող կապերն այլ տնտեսությունների հետ հատկապես» մեծամասամբ լավ է իրենց երկրի համար, 21%-ը հակառակ կարծիքին է եւ 27%-ը չի պատասխանել: Մեծ թվով լեհեր միջազգային առեւտրին դրական են վերաբերվում, եւ ավելի քան 3/4-ն ասում է, որ այն լավ է լեհական տնտեսության (76%) եւ ընկերությունների (77%) համար: Լեհերը նաեւ այն կարծիքին են, որ անհատները շահույթ ունեն միջազգային առեւտրից: 70%-ն ասում է, որ այն լավ է իրենց նման սպառողների համար, եւ ըստ 59%-ի այն լավ է իրենց իսկ կենսամակարդակի համար: Իսկ ծանրակշիռ մեծամասնությունը (71%) ասում է, որ առեւտուրը դրական է «Լեհաստանում աշխատատեղերի ստեղծման» համար, միայն նեղ մեծամասնությունը (53%) կարծում է, որ այն լավ է «լեհ աշխատուժի աշխատանքային երաշխիքի համար», մինչդեռ 21%-ն ասում է, որ այն վատ է, իսկ 26%-ը վստահ չէ: Յուրաքանչյուր 10 լեհից մոտավորապես 9-ը (88%) ասում է, որ «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները» պետք է ներառվեն առեւտրային պայմանագրերում: Լեհերը 49%-25% հարաբերակցությամբ այն կարծիքին են, որ միջազգային առեւտուրը միջավայրի համար լավ է, սակայն 26%-ն այս հարցին չի պատասխանել: Սակայն գերակշիռ մեծամասնությունը (90%) դեռեւս կարծում է, որ առեւտրային պայմանագրերը պետք է ներառեն բնապահպանության չափանիշները:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
Լեվադա կենտրոն, սեպտեմբեր 2006

Ռուսաստանցիները անտարբեր են գլոբալացման օգուտների նկատմամբ, սակայն նրանք կողմնորոշված են դրական վերաբերմունք դրսեւորել միջազգային առեւտրի ազդեցության նկատմամբ: Ռուսների 41%-ն ասում է, որ գլոբալացումը «մեծամասամբ լավ» է իրենց երկրի համար, որը հարցմանը մասնակցած 18 երկրների շարքում ամենափոքր տոկոսն է կազմում: Միայն 1/4-ը (24%) ասում է, որ այն «ընդհանուր առմամբ վատ» է, եւ ավելի քան 1/3-ը (34%) այս հարցին պատասխան չի տվել: Ավելի քան 2/3-ը (66%) հավատացած է, որ միջազգային առեւտուրը լավ է Ռուսաստանի տնտեսության համար, նեղ մեծամասնությունն (51%) այն կարծիքին է, որ այն լավ է ընկերությունների համար, սակայն 1/3-ը (34%) հակառակ կարծիքին է: Յուրաքանչյուր 5 ռուսաստանցուց 3-ը (59%) կարծում է, որ միջազգային առեւտորը օգտակար է իրենց նման սպառողների համար, 22 տոկոսն հակառակն է պնդում, եւ ըստ 45 տոկոսի այն նպաստում է իրենց իսկ կենսամակարդակին, 19 տոկոսը սրա հակառակ կարծիքին է, իսկ 36 տոկոսն՝ անվստահ: Ռուսաստանցիներն, ընդհանուր առմամբ, միջազգային առեւտուրը դրական են գնահատում ռուս աշխատուժի համար: 52 տոկոսն ասում է, որ այն լավ է «Ռուսաստանում աշխատատեղերի ստեղծման համար», իսկ 27 տոկոսը հակառակ կարծիքին է: Ավելի ստվար զանգվածի կարծիքով (43%) առեւտուրը լավ է ռուսասատնյան աշխատուժի աշխատանքային երաշխիքների համար, իսկ 32 տոկոսն ասում է, որ այն վատ է: Ռուսները հակված են մտածելու, որ միջազգային առեւտուրը վնասում է շրջակա միջավայրին, ըստ 44%-ի այն վատ է, միայն 25%-ի կարծիքով այն լավ է, իսկ 31%-ն այս հարցին չի պատասխանել:

ՈՒԿՐԱԻՆԱ
Սոցիլոգիայի Կիեւյան միջազգային ինստիտուտ, սեպտեմբեր 2006թ.

Ուկրաինացիներն այն կարծիքին են, որ գլոբալացումը եւ միջազգային առեւտուրն, ընդհանուր առմամբ, դրական են իրենց երկրի համար, սակայն նրանք առավել անվստահ են այն հարցի շուրջ, թե աշխատատեղերի պահպանման առումով այն դրական է, թե ոչ: 55 տոկոսն ասում է, որ գլոբալացումն իրենց երկրի համար «մեծամասամբ լավ» է, միայն 11%-ը հակառակ կարծիքին է, իսկ 1/3-ը (34%) կամ համոզված չէ եւ կամ այս հարցին չի պատասխանել: Սակայն մեծ թվով ուկրաինացիներ այն կարծիքին են, որ առեւտուրը լավ է իրենց երկրի տնտեսության (78%) եւ ընկերությունների (69%) համար: Ավելի համեստ մեծամասնություն կարծում է, որ առեւտուրը քաջալերում է անհատական կենսամակարդակը: 2/3-ը (66%) ասում է, որ այն լավ է «ձեզ նման սպառողների» համար, իսկ ավելի համեստ մեծամասնություն (53%) համաձայն է, որ այն լավ է «ձեր իսկ կենսամակարդակի համար»: 2/3-ը (66%) կարծում է, որ Ուկրաինայում աշխատատեղերի ստեղծման համար լավ է, 14 տոկոսը հակառակ կարծիքին է, բայց միայն կեսը (50%) ասում է, որ այն դրական է «ուկրաինացի աշխատուժի աշխատանքային երաշխիքների» համար, 16%-ն ասում է, որ այն վատ է, իսկ 34%-ն այս հարցին չի պատասխանել: Ուկրաինացիների ավելի քան 4/5 (85%) այն կարծիքին է, որ առեւտրային պայմանագրերի տակ ստորագրող երկրներին հարկավոր է պահպանել «աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները»: Ուկրաինացիներն, ընդհանուր առմամբ, միջազգային առեւտուրը դրականորեն են գնահատում շրջակա միջավայրի (40%) համար, 1/4-ը (25%) հակառակն է պնդում եւ ավելի քան 1/3-ը (36%) այս հարցին չի պատասխանել: Գերակշռող մեծամասնությունը՝ 88%-ն ասում է, որ բնապահպանության չափանիշները պետք է առեւտրային պայմանագրերի մաս կազմեն: Ըստ ուկրաինացիների 40%-ի, իրենց երկիրը «որպես ընդհանուր կանոն» պետք է ենթարկվի այն որոշումներին, որոնք Առեւտրի միջազգային կազմակերպության կողմից կայացվել են ի վնաս Ուկրաինայի: 29%-ն ասում է, որ ենթարկվելը կախված է հանգամանքներից, ըստ 12%-ի՝ չպետք է ենթարկվի, իսկ 19%-ն այս հարցին չի պատասխանել: